ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

30.01. 2016թ.Ք. Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան
Քարտուղար Ա. Սարիբեկյան

Խորհրդի նիստին մասնակցում էին նախագահ Ն. Խուդավերդյանը, քարտուղար Ա. Սարիբեկյանը, Հ. Մարզպանյանը, Գ. Հովհաննիսյան, Ա. Պոտոսյան, Պ Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը, Գ. Սիրոյանը, Հ. Ազիզյանը, Մ. Սարուխանյանը, Լ. Մելիքջանյան Վ. Առաքելյանը, ուս. խորհրդի նախագահ Լ. Ալեքսանյանը, ՈՒԳԸ նախագահ Լ. Բլբուլյանը, Ս. Սաֆարյանը և Հ. Քարտաշյանը:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը բացելով ֆակուլտետի խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1.Ֆակուլտետի 2015-16 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին:
/Զեկ. Ն. Խուդավերդյան/
2. Ֆակուլտետի ըստ մասնագիտությունների իրականացվող կրթական ծրագրերի 2015-2016 ուս. տարվա երկրորդ կիսամյակի դասացուցակների հաստատման մասին:
/Զեկ. Ն. Խուդավերդյան/
3.Ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

1.Լսեցին – Ն. Խուդավերդյանին

Ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2015-16 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփումով ելույթ ունեցավ ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը: Նա նշեց, որ դեկանատը ամենայն մանրամասնությամբ վերլուծել է 2015-16 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները: Ներկայացրեց, որ ֆակուլտետում քննաշրջանը կազմակերպվել է 153 (անվճար՝ 39, վճարովի՝ 114) ուսանողների համար, այդ թվում՝ «Տնտեսագիտության տեսություն»

մասնագիտության՝ 93 (անվճար՝ 22, վճարովի՝ 79) ուսանողի և «Սերվիս» մասնագիտության՝ 52 (անվճար՝ 17, վճարովի՝ 35) ուսանողի համար: Քննությունները դրական են հանձնել 106 ուսանող: Հետևաբար պարտք ունեն 47 ուսանող: Ստորև ներկայացնենք առաջադիմությունն ըստ մասնագիտությունների և կուրսերի.

Տնտեսագիտության տեսություն

I կուրս

Թույլատրվել է մասնակցելու 17 /6 անվճար և 11 վճարովի/ ուսանողների, որից դրական են հանձնել 12-ը, որից 5-ը անվճար և 7-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է 71% /անվճար՝ 83% և վճարովիներինը՝ 64%/: Կուրսը շատ պարտքեր գրանցել է «Մաթեմատիկական անալիզ-1» դասընթացից, որի առաջադիմությունը կազմել է 71%:

II կուրս

Թույլատրվել է մասնակցելու 32 /5 անվճար և 27 վճարովի/ ուսանողների, որից դրական են հանձնել 11-ը, որից 5-ը անվճար և 6-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է 34% /անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 22%/: Առաջադիմության ցածր արդյունքի հիմնական պատճառ է եղել «Ազգային տնտեսություն» և «Գործոյթների հետազոտման մաթ. մեթոդներ» դասընթացներից գրանցած մեծ թվով «անբավարար» գնահատականները, որոնց առաջադիմությունը համապատասխանաբար կազմել է՝ 47% և 63%:

III կուրս

Թույլատրվել է մասնակցելու 21 /5 անվճար և 16 վճարովի/ ուսանողների, որից դրական են հանձնել 11-ը, որից 5-ը անվճար և 6-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է 52% /անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 38%/: Կուրսի հիմնական պարտքերը գրանցվել են «Միջազգային տնտեսագիտություն» և «Տնտեսագիտ. մտքի պատմություն» առարկաներից, որոնց առաջադիմությունը համապատասխանաբար կազմել է 62% և 71%:

IV կուրս

Թույլատրվել է մասնակցելու 35 /6 անվճար և 29 վճարովի/ ուսանողների, որից դրական են հանձնել 29-ը, որից 6-ը անվճար և 23-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է 83% /անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 79%/:

Այսպիսով, տվյալ մասնագիտությունից քննաշրջանին մասնակցության թույլտվություն է ստացել 105 ուսանողներ, որից դրական է հանձնել 63 ուսանող, պարտք ունեն 42 ուսանող: Մասնագիտության առաջադիմությունը կազմել է 60%:

«Սերվիս»

I կուրս

Թույլատրվել է մասնակցելու 9 /4 անվճար և 5 վճարովի/ ուսանողների, որից դրական են հանձնել 8-ը, որից 4-ը անվճար և 4-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է 89% /անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 80%/:

II կուրս

Թույլատրվել է մասնակցելու 12 /4 անվճար և 8 վճարովի/ ուսանողների, որից դրական են հանձնել 10-ը, որից 4-ը անվճար և 6-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է 83% /անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 75%/:

III կուրս

Թույլատրվել է մասնակցելու 14 /4 անվճար և 10 վճարովի/ ուսանողների, որից դրական են հանձնել 13-ը, որից 4-ը անվճար և 9-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է 93% /անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 90%/:

IV կուրս

Թույլատրվել է մասնակցելու 18 /5 անվճար և 13 վճարովի/ ուսանողների, որից դրական են հանձնել 12-ը, որից 5-ը անվճար և 7-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է 67% /անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 54%/:

Այսպիսով, տվյալ մասնագիտությունից քննաշրջանին մասնակցության թույլտվություն է ստացել 53 ուսանողներ, որից դրական է հանձնել 43 ուսանող, պարտք ունեն 10 ուսանող: Մասնա գիտության առաջադիմությունը կազմել է 81%:
Եվ այսպիսով, ֆակուլտետում գրանցվել է 67% առաջադիմություն:
Արտահայտվեցին - «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության խորհրդատու Ա. Սարիբեկյանը և «Սերվիս» մասնագիտության խորհրդատու Պ. Ասիլբեկյանը: Նրանք առաջարկեցին ֆակուլտետի ըստ մասնագտությունների 2015–16 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

Որոշեցին - Ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2015–16 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

2.Լսեցին - ֆակուլտետի ըստ մասնագիտությունների իրականացվող կրթական ծրագրերի 2015-2016 ուս. տարվա երկրորդ կիսամյակի դասացուցակների հաստատման մասին

/Զեկ. Ն. Խուդավերդյան/

Ն. Խուդավերդյանը նշեց, որ դեկանատի կողմից կազմված են երկրորդ կիսամյակի դասացուցակը, որը ամբողջովին համապատասխանում է աշխատանքային ուսումնական պլաններին, ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածություններին: Երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ դասախոսական կազմն ամբողջությամբ համալրված է: Այսպիսով, բոլոր անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները իրականացված են և որևէ խոչընդոտ չկա երկրորդ կիսամյակի գործընթացը սկսելու համար:

Արտահայտվեցին - «Սերվիս» մասնագիտության խորհրդատու Պ. Ասիլբեկյանը և «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության խորհրդատու Ա. Սարիբեկյանը:

Որոշեցին - հաստատել ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2015 -2016 ուս. տարվա դասատախտակները:

3.Լսեցին -ընթացիկ հարցեր

3.1.Ա.Պոտոսյանի «Զբոսաշրջության հիմունքներ» ուսումնական ձեռնակի քննարկման և հրատարակության ներկայացման մասին

/Զեկ. Գ. Հովհաննիսյան/

Ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանը ֆակուլտետի գիտական խորհրդի քննարկմանը ներկայացրեց ամբիոնի դոցենտ Ա.Պոտոսյանի «Զբոսաշրջության հիմունքներ» ուսումնական ձեռնակը՝ նշելով, որ ձեռնարկի էլեկտրոնային տարբերակին արդեն ծանոթ են ամբիոնի բոլոր դասախոսները տարեսկզբից: Հավելեց, որ խրախուսելի է հայերենով մասնագիտական ձեռնարկների ստեղծման աշխատանքները: Ձեռնարկում ամփոփված են դոցենտ Ա. Պոտոսյանի երկարամյա ուսումնասիրությունները զբոսաշրջության վերաբերյալ: Տվյալ աշխատանքը կարող է ծառայել որպես ուսումնական ձեռնարկ ԲՈՒՀ-երի «Սերվիս» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների ուսանողների և այդ ոլորտների աշխատողների համար:

Արտահայտվեցին –Պ. Ասիլբեկյանը, Հ. Ազիզյանը

Նրանք նշեցին ձեռնարկի կարևորությունը ինչպես առարկայի դասավանդման, այնպես էլ «Սերվիս» մասնագիտությունը հայերեն լեզվով մասնագիտական գրականությամբ համլրելու առումով :

Որոշեցին -դիմել մասնաճյուղի Գիտական խորհրդին՝ «Զբոսաշրջության հիմունքներ» ուսումնական ձեռնակը հրատարակության երաշխավորելու համար:

3.2.Լսեցին - ԵՊՀ Իմ զարգացման 2016-2020թթ ռազմավարական ծրագրի նախագծի քննարկման մասին:
/Զեկ. Ն. Խուդավերդյան/

Նա նշեց, որ ժամանակին դիտողությունների, առաջարկությունների և շահագրգիռ քննարկման համար նախօրոք ֆակուլտետի բոլոր դասախոսների և արտաքին շահառուների էլեկտրոնային փոստերին ուղարկվել է ԵՊՀ Իմ զարգացման 2016-2020թթ ռազմավարական ծրագրի նախագծի էլեկրտրոնային տարբերակը: Քննարկումների ժամանակ ֆակուլտետի խորհրդի անդամները ներկայացրեցին իրենց դիտարկումները և առաջարկությունները 2016-2020թթ ռազմավարական ծրագրի նախագծի վերաբերյալ: Ֆակուլտետում գործող երկու մասնագիտական ամբիոնների դասախոսները ծանոթանալով 2016-2020թթ ռազմավարական ծրագրի նախագծին հիմնականում համամիտ են ռազմավարական ծրագրում ներկայացված խնդիրներին ու դրույթներին, համարելով որ այն առաջիկա չորս տարիների ընթացքում կարող է ուղեցույց լինել ԲՈՒՀ-ի դինամիկ զարգացման, առաջիկա մարտահրավերների հաղթահարման համար:

Արտահայտվեց ին - Գ. Հովհաննիսյանը, Հ. Մարգպանյանը, Վ. Առաքելյանը

Նրանք նշեցին, որ 2016-2020թթ. Ռազմավարական ծրագրի նախագիծը հիմնված է նախորդ ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքում առաջացած բացթողումների , ձեռք բերված դրական դինամիկայի և ուղղված է նոր ծագած մարտահրավերների ու խնդիրների լուծմանը:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ 2016-2020թթ Ռազմավարական ծրագրի նախագծի քննարկման արդյունքում ունենք որոշակի նկատառումներ և առաջարկություններ, և այն ներկայացնում ենք նախագծի օրինակի վրա ՄԿՈԱ բաժին:

Որոշեցին - հավանություն տալ 2016-2020 թթ. ԵՊՀ ԻՄ Ռազմավարական ծրագրի նախագծին նկատառումներով և առաջարկություններով հանդերձ:

3.3.Լսեցին - ֆակուլտետի խորհրդի կազմում փոփոխություն կատարելու մասին

/Զեկ Ն. Խուդավերդյան/

Նա նշեց, որ 2015թ. դեկտեմբերին ֆակուլտետում տեղի է ունեցել ուսանողական խորհրդի նախագահի ընտրություններ: Ուսանողական խորհրդի ընկերության նախագահ է ընտրվել «Տնտեսագիտության տեսության» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողուհի Հասմիկ Քարտաշյանը, այդ իսկ

պատճառով ֆակուլտետի խորհրդի կազմում պետք է կատարել փոփոխություն: Ն. Խուդավերդյանը ներկայացրեց ֆակուլտետի խորհրդի նոր կազմը.

1. Խուդավերդյան Նելլի - խորհրդի նախագահ,
2. Սարիբեկյան Անուշ - խորհրդի քարտուղար,
3. Մարզպանյան Հարություն - Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ,
4. Հովհաննիսյան Գուրգեն - Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ,
5. Սիրոյան Գարիկ - Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ,
6. Ավետիսյան Գայանե - Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ,
7. Պոտոսյան Ակսել - Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դոցենտ,
8. Ազիզյան Հռիփսիմե - Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ,
9. Ասիլբեկյան Պավել - Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, ֆակուլտետի արհեստակցական միության նախագահ,
10. Սարուխանյան Մուշեղ - ՀՈՒԲ վարիչի տեղակալ,
11. Առաքելյան Վահագն - Իջևանի տարածաշրջանային քոլեջի տնօրեն,
12. Մելիքջանյան Լյովա - ԱՇԻԲ «Իջևանի մասնաճյուղ» ՓԲԸ կառավարիչ,
13. Ղահրամանյան Հովհաննես - Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալության տնօրեն,
14. Քարտաշյան Հասմիկ - ֆակուլտետի ՈՒԽ նախագահ,
15. Բլբուլյան Լիա - ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ,
16. Սաֆարյան Սվետա- «Սերվիս» մասնագիտության III կուրսի ուսանողուհի,
17. Մխիթարյան Նարինե - «Սերվիս» մասնագիտության I կուրսի ուսանողուհի:

Արտահատվեցին - Հ. Մարզպանյանը, Գ. Հովհաննիսյանը

Արտահայտվողները հավանություն տվեցին դեկանի ներկայացրած խորհրդի կազմին:

Որոշեցին - հաստատել ֆակուլտետի խորհրդի նոր կազմը:

Գիտխորհրդի նախագահ *Ն. Խուդավերդյան*
Քարտուղար *Ա. Սարիբեկյան*